

Լ. Մելիքյան-Ռեկ

(Հայկական ՍՍՌ ԳԱ-ի բոլորակից ահում)

Գ. ՍՈՒՆԳՈՒԿՅԱՆԸ ԵՎ ՎՐԱՑ ԿԼԱՍԻԿՆԵՐԸ

Դու հայ ես, բնկեր, իսկ ես վերացի,
Բայց մենք եղբայր ենք, անուշ դրացի.
Նույն հողի ղըրկում մի օր մենք ծընվել,
Նույն սար ու գաջտի բերքով ենք սընվել:
(Ա. Մերթթեյի-Գ. Մ. Աունդուկյանցի):

Միության ե եղբայրության
ու մի բան չեմ գերազասել.
Ուժը սրբանց զուգակցության
էն զըլիսիցն եմ ասել, ասել:
(Նույնը-Բարեկամիս):

Հայ թատերադրությունների փառք ու պարծանք Գարրիել Մկրտչի Սունդուկյանը կամ, ինչպես ինքն էր ստորագրում, Սունդուկյանցը¹ (1825—1912) իր ամբողջ կյանքում համարյա թե թրիլիսիումն է անց կացրել: Բացառություն են կաղմում, ի հարկե, ուսանողական տարիները (1846—1850), երբ նա ուսանում էր Պետերբուրգի համալսարանում, ինչպես և ծառայության սկզբնական մի շրջան (1853—1858), երբ նա, իրրե «աքսորյալ», պաշտոնավարում էր Բերլենտում:

Երական ասպարեզ հանգես գալով 1863 թվին, երբ նա գրում է իր «Գիշիրվան սարը խեր է» կատակերգությունը, Գ. Սունդուկյանը կես զարշարունակ գործել է թրիլիսիում՝ սպասավորելով թե հայ և թե վրաց թատրոնին, միաժամանակ շփումն ունենալով և սերտ կապ հաստատելով հայ և վրաց զրական և բեմական գործիչների հետ:

Այստեղից պարզ է, որ Գ. Սունդուկյանի ստեղծագործության անաչառ հետադրողը չի կարող այնպիսի հարցերի կողքով անցնել, ինչպիսիք են մեծանուն թատերադրի ստեղծագործության առնչությունը Վրաստանի, մասնավորապես թրիլիսիի, և առհասարակ վրաց իրականության հետ:

Ի նկատի առնելով այս բացը հայ և վրաց զրականագիտության մեջ՝ Վրաստանում գործող հայագետների առանձին ներկայացուցիչները միտք են հղացել արձագանքել հայ մեծ թատերադրի ծննդյան 125-ամյա հոբելյանին՝ նվիրաբերելով վրաց հասարակությանը համապատասխան գործեր: Օրինակ.

ա. Գ. Սունդուկյանի երկերի իր իսկ կողմից թարգմանված, կամ ուրիշների թարգմանած, բայց իր խմբագրած, կարճ ասած՝ իր իսկ կող-

¹ Այս ձևը գործածվում է սովորաբար թե վրացերենում և թե ռուսերենում, ճիշտ այնպես, ինչպես շատ ուրիշները, նույնիսկ Ստ. Մալխասյանը մինչև վերջին օրը գրում էր «Մալխասյանց»:

մից հեղինակավորված վրացական վերսիաների (թարգմանությունների) մի-հատորյակը, որը հորելյանի օրերին է լույս տեսնելու ակադեմիկոս-բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլու աշխատասիրությամբ և խմբագրությամբ «Սարճոթա մձերալի» (=Սովետական դրոշ)-ի հրատարակչության գծով¹։

բ. «Վրացերեն բառապաշարը և վրացական արտահայտությունները Գ. Սունդուկյանի երկերում»՝ Մերի Մեսխիշվիլու թեկնածուական զիսերտացիոն աշխատությունը։

գ. «Գ. Սունդուկյանը և վրաց թատրոնը»՝ Քեթևան Գուգուշվիլիի աշխատությունը և այլն։

Բացի այս ամենից, Գ. Սունդուկյանի հորելենական օրերի կապակցությամբ ավելորդ չէր լինի վերհրչել և ի մի ամփոփել մի քանի գծեր մեծ թատերադրի կյանքից ու գործունեությունից, կապված անմիջապես վրաց կլասիկների հետ, այն է՝ Ալեքսանդր Ճավճավաձեի (1786—1846), Գրիգոր Օրբելիանու (1800—1883), Ռաֆիել Էրիսթավու (1824—1901), Իլիա Ճավճավաձեի (1837—1907) և Ակակի Մերեթելու (1840—1915) հետ։

/ * *

Դ. Սունդուկյանը, հավանական է, անմիջապես ոչ մի շփումն չի ունեցել և չէր էլ կարող ունենալ վրաց կլասիկ դրականության ականավոր ներկայացուցիչ, բանաստեղծ Ալեքսանդր Ճավճավաձեի կամ, ըստ հայկական հորջորջման, Ճավճավաղի (1786—1846) հետ, որն իր փեսա Ա. Գրիբոեդովի հետ միասին մեծ ծառայություն մատուցեց հայ ժողովրդին պարսից լծից նյա ազատադրման գործում՝ Ալ. Ճավճավաձեն հորինեց իր սքանչելի՝ «Դեռուհայի լիճը» բանաստեղծությունը³։

Անկասկած, Գ. Սունդուկյանը ղեռնս Թրիլիսիում լսած կլինեք Ալ. Ճավճավաձեի հորինած և լայն ժողովրդականություն ստացած «Լոթինների մուխամբազը» (վրացերեն՝ «Մուխամբազի լաթխուրի»), որ երգվում էր ինչպես հիմնական տեքստով, նույնպես և «հեղինակին չպահանջած վարիանտներով»⁴։

Հենց նույն 1846 թ. այս երգի մի վարիանտը լույս է տեսնում Պետերբուրգում այնտեղի համալսարանի պրոֆեսոր վրացագետ Դավիթ Չու-

¹ Գ. Սունդուկյանի երկերից վրացերեն թարգմանությամբ ջարդ հրատարակված են «Վարինի վեչերը» (1879), «Պեպո» (1880), «Գրիշիվան սարր խեր է» (1911) և «Կտակ. Իմ մահն ու թաղումը» (1912)։

² Акты Кавк. Археогр. Комиссии, VII, 607, 608, 767—770 etc.: Ալ. Երիցևան. Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և կովկասի Հայր XIX դարում. մասն ա (1800—1832 թ.). Թիֆլիս, 1894, էջ 352—353, 387—389, 394, 407—413 և այլն («Երևանի նահանգում զաղթական հայր տակավին սիրով հիշում են իշխ. Ալեքսանդր Ճավճավաձեի բարի անունը», էջ 355)։ Վ. Պարսամյան. Գրիբոեդովը Հայաստանում. Երևան, 1945, էջ 98, 118, 131, 166—167, 171, 187, 215, 225։ Ս. Մաղլակելիձե. Նյութեր Ալեքսանդր Ճավճավաձեի կենսագրության համար. «Սախտորիտ մոմբե» (Պատմության Տեղեկագիր), II, Թր. 1946, էջ 188—217, 223—224, 260—261։

³ Այս բանաստեղծության ոչ լրիվ հայերեն թարգմանությունը՝ «Սեանի ավերին» վերնագրով՝ տես. Գեորգ Ասատուր. Մերձարևելքի դրականության պատմություն, Վրաց դրականություն, Լ. Նմուշներ պոեզիայից, Երևան, 1931 թ., էջ 39—40։

⁴ Նույն տեղում։

րինովի կաղմած «Վրացերեն ծաղկաքաղձ-ում», որը ոչ մի կերպ չէր կարող վրիպել Գ. Սունդուկյանի ուշադրությունից: Նույն երգը նույնությամբ վերահրատարակվում է նույն Գ. Չուրինովի «Մաղկաքաղձ»-ի երկրորդ հրատարակության մեջ՝ նույն Պետերբուրգում 1863 թվին:

1869 թ. Գ. Սունդուկյանն ավարտում է իր «Եվայն կամ նոր Դիոդինես» կատակերգությունը 2 արարվածով, ուր, ի միջի այլոց, օգտագործում է Ա. Ճավճավաձեի այս երգը, սակայն ոչ թէ ըստ ր. Չուրինովի 1846 և 1863 թթ. հրատարակությունների, այլ մի փոքր տարբեր վարիանտով, որը կարող էր՝ ծանոթ լինել նրան և Գ. Չուրինովից անկախ: Խրախճանքի այս երգը Գ. Սունդուկյանը բերում է ոչ թե ամբողջությամբ, այլ միմիայն 1, 2, 3, 4, 11 և 13-րդ տունները, մինչդեռ ամբողջ երգը 14 || 15 տուն է պարունակում:³ Իսկ զրանից, Գ. Սունդուկյանի օգտագործած վարիանտի տեքստին ծանոթագրություններում կցված է Գ. Տ. Ղ.-ի հայերեն չափածո թարգմանությունը:⁴

Օգտվելով առիթից՝ նշում ենք Ա. Ճավճավաձեի «Լոթինների սուլամբաղձ»-ի հիմնական տեքստի և Գ. Սունդուկյանի պիեսում օգտագործված վարիանտի տարբերությունները:

Նախ՝ ր. Սունդուկյանի օգտագործած վարիանտում աչքի է ընկնում յուրաքանչյուր տան առաջին և երրորդ տողերին կցված «արիա-լալի», իսկ երկրորդ և չորրորդ տողերին՝ «թարիա-լալի» կրկներգը. մինչդեռ հիմնական տեքստում սրանք բացակայում են:

Ապա այլ և այլ տուններում նկատվում են հետևյալ տարբերակները.—

Ըստ Գ. Ս.	ըստ բնագրի
Տուն I ₃ շեմողգոմամա	I ₃ շեմողգոմաման
» III ₁ սաղվինո	III ₁ սաղվինե
» IV ₂ գեմովներա	IV ₂ դեմերա
» IV ₃ թիթոն	IV ₂ թվիթոն
» VI ₂ մծվանեթ մոսիլա	XIII ₂ մծվանիթ շեմկալսա

* * *

Պետերբուրգի համալսարանն ավարտելուց հետո Գ. Սունդուկյանն, ինչպես հայտնի է, վերադառնում է Թբիլիսի, ուր և մտնում է պետական ծառայության՝ Կովկասի փոխարքայի դիվանատան բանավոր թարգմանչի (словесный переводчик) պաշտոնով՝ 1850 թ. 5 դեկտեմբերից. և այդ օրվանից հաստատվում է կոլլեժսկի սեկրետարի (коллежский секретарь) չինում: 1853 թ. 8 դեկտեմբերից Գ. Սունդուկյանը նշանակվում է նույն տեղ սեղանապետի կրտսեր օգնականի (младший помощник столо-

¹ Грузинская хрестоматия, составленная Д. Чубиновым. ч. II. Стихотворения. СПб. 1846, стр. 233—234.

² Նույնը, 1863, էջ 90:

³ Ալեքսանդր Ճավճավաձե, Երկեր, Ի. Գրիշաշվիլու խմբագրությամբ, Թբիլիսի, 1940, էջ 5—6 (վրացերեն), ընդամենը 15 տուն. մինչդեռ Գ. Չուրինովի վարիանտը 14 տունից է բաղկացած: Գ. Ասատուրի թարգմանությունը պարունակում է 1, 2, 3, 4, 5, 6, 10, 9 (ետուտաղ), 11 և 12 տունները:

⁴ Այս թարգմանությունը (1869) տարբերվում է Գ. Ասատուրի թարգմանությունից (1933):

начальника) պաշտոնում՝ միաժամանակ հաստատվելով տիտուլյարնի սովետնիկի (титулярный советник) լինում, ինչպես երևում է Վրաստանի Գեներալական Պատմական Արխիվում պահված դործից:

1853 թվին Դ. Սունդուկյանն ինչ որ ընդհարում է ունենում Կովկասի փոխարքայի զիվանատան բաժանմունքի պետ և նույն զիվանատան զանձապահ, կոլլեժսկի սեկրետար Բելյանի հետ, որի կապակցությամբ Դ. Սունդուկյանը, զիվանատան զիրեկտորի կարգադրությամբ զիվանատան կից տնային կալանքի է ենթարկվում: Սակայն Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովն՝ անբավարար համարելով իր զիվանատան զիրեկտորի միջոցառումը Դ. Սունդուկյանի նկատմամբ՝ կարգադրում է աքսորել Վերջինիս Դերբենտ տեղիս զինվորական նահանգապետի զիվանատան զործերի վարիչի պաշտոնով, նույն նահանգապետի (զենեբալմայոր Մինկվիցի) հսկողության տակ:

Մեր տրամադրության տակ է նորերս հայտնադործված՝ Փոխարքա Մ. Ս. Վորոնցովի 1853 թ. 7 դեկտեմբերի № 3270 թվահամարով առաջադրությունը իր զիվանատան զիրեկտորի անունով, հետևյալ բովանդակությամբ (էջ 65 ա—95 բ)․

«Господину Директору Канцелярии моей по званию Наместника Кавказского.

«Дошло до сведения моего, что летом нынешнего года младший помощник столоначальника Канцелярии моей титулярный советник Сундукянц дозволил себе дерзкие и предосудительные выражения против начальника отделения и казначея Канцелярии моей, коллежского советника Беляева, при объяснениях по службе, и что Ваше Превосходительство ограничились арестованием его при Канцелярии.

«Находя эту меру взыскания совершенно недостаточною, тем более, что чиновник Сундукянц не согласился даже просить прощения у обиженного им, я предлагаю Вашему Превосходительству сделать немедленно надлежащее распоряжение о безотлагательном отправлении Сундукянца на службу к Дербентскому военному губернатору с увольнением из Канцелярии моей, поручив генерал-майору Минквицу иметь наблюдение за поведением его, не дозволяя ему выезда из Дербента без особого разрешения моего».

Դ. Սունդուկյանի դործի² այսպիսի ընթացքի հետևանքով նրա մայր Թինաթին Սունդուկյան-Ռոտինյանը հայցագրեր է ուղղել ուր հարկն է, որպեսզի իր որդի Դարբեկին վերադարձնեն Թրիխսի, պատճառարանելով իր ծանր վիճակը:

Այսպիսի մի թուղթ՝ զրված ուսուերեն, բայց վրացերեն ստորագրու-

1 Հմմ. Ե. Շահագիր, Երբրեկ Սունդուկյանց (ձննդյան հարյուրամյակի առթիվ). Կենսագրական նոթեր. «Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտության և Արվեստի Ինստիտուտի» № 2, Երևան, 1927 թ., էջ 136—137:

2 Դ. Սունդուկյանի ընդհարումը ցարական չինովնիկի հետ հիշեցնում է Ս. Արոմյանի նույնպիսի ընդհարումը Թրիխսիի այգիներից մեկում, երբ 3 չինովնիկ նրան վերավորանք են հասցնում:

թյամբ¹ Թինաթին Սունդուկյանը մատուցել է 1856 թ. ղեկտեմբերին, նոր նշանակված փոխարքա իշխ. Ա. Պ. Բարյատինսկու² անունով:

Միաժամանակ՝ գործն հաջողեցնելու նպատակով Թ. Սունդուկյանը միջամտություն է խնդրում նույն տարիներին մերձկասպյան երկրից երբեմն Թրիլիսի եկող վաղեմի ծանոթ Գրիգոր Օրբելիանուն: Եվ, ի հետեւումն այսպիսի միջնորդության, Գր. Օրբելիանին իր կողմից հատուկ նամակով զիմում է Կովկասի փոխարքայի զիվանատան ղրեկտոր Ալեքսեյ Ֆեոդորովիչ Կրուկենշտերնին համապատասխան պատճառաբանությամբ:

Քանի որ Գրիգոր Օրբելիանու այս նամակը, գրված 1857 թվի 25 փետրվարին, կարևոր փաստաթուղթ է Գ. Սունդուկյանի և Գ. Օրբելիանու փոխհարաբերությանց լուսաբանման համար, որ օգտագործված էր ինչպես Գ. Սունդուկյանի, նույնպես և Գ. Օրբելիանու կյանքի ու գործունեության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների կողմից, այն ևս ընդօրինակում ենք այստեղ:

«Милостивый Государь Алексей Федорович!

«Во время пребывания моего в Тифлисе, несколько раз, приходила ко мне мать служащего в Канцелярии Дербентского военного губернатора, титулярного советника Сундукианца и, объясняя крайнее во многих отношениях положение, терпимое ею со времени высылки сына ее на службу в Дербент, просила моего ходатайства о переводе его в Тифлис, на прежнее место служения.

«Вследствие этого и зная лично Сундукианца, как отличного молодого человека, рекомендованного всегда ближайшим его Начальством за его похвальную службу и примерное поведение,³ я не мог отказать матери в участии своем в просьбе ее о сыне, и желал лично передать Вам покорнейшую просьбу о нем; но разные дела и хлопоты, в которых я был во все время пребывания своего в Тифлисе, помешали мне.

«Ныне отъезжая, я решаюсь обратиться к Вам письменно, с убедительной просьбою о принятии в судьбе Сундукианца благосклонного участия и переводе его на службу в Тифлис, на соответственное место, когда только Вы найдете это возможным».

Եվ ահա, անտարակույս, Գր. Օրբելիանու այս միջամտության հետեւանքով է, որ 1858 թ. Գ. Սունդուկյանը վերադառնում է Թրիլիսի, ուր մի ժամանակ պաշտոնավարում էր ճանապարհների շաղորդակցության վարչության մեջ, ապա Թրիլիսիի նահանգական վարչության մեջ:

¹ Այս հանգամանքը Ե. Շահազիզը (հիշյալ գրվածքում) բացատրում է նրանով, «որ նա, Թինաթինան, հայերեն գրել-կարգալ չի իմացել»: հետեւպես և Գարրիելն ևս «յուր մանկության օրերում հավանորեն վրացերեն է թոթովել ու հայերենը հետո է սովորել»: Մեր կարծիքով, Գարրիելի մայրը կարող էր հայերեն գրել-կարգալ չիմանալ, բայց Թրիլիսիի բարբառով խոսեր և այդ բարբառը մատչելի զարձներ յուրայիններին:

² Կովկասի փոխարքաներ էին. Մ. Ս. Վորոնցով՝ 1844—1854, Ն. Ն. Մուրավյով՝ 1854—1856, Ա. Պ. Բարյատինսկի՝ 1856—1862:

³ Լինելով մերձկասպյան երկրի գորբերի հրամանատար և քաղաքացիական մասի պետ՝ Գր. Օրբելիանին մեծ մասամբ ապրել է Դերբենտում, ուր և, հավանական է, շփույթ կունենար տեղիս զինվորական նահանգապետի, նրա զիվանատան ու վերջինիս վարիչ, երիտասարդ Գ. Սունդուկյանի հետ:

Սակայն Գր. Օրբելիանու միջամտությունը հրիտասարդ Գ. Սունդուկյանին աքսորից ազատելու և Թրիլիսիում վերադառնալու համար, միակ դեպքը չէր, որով Գր. Օրբելիանին ցուցարներից իր հողատար վերադարձումըրը դեպի Գ. Սունդուկյանի սննդավորությունը:

Մի քանի խոսք՝ 1865 թ. 27—28 հունիսի դեպքերի, Թրիլիսիի համաքարների ապստամբության մասին, որի «գրգիչները» ու «զրգոչները» դերուհն են եղել, ի միջի այլոց, Թրիլիսիում զործող առաջավոր հայ ինտելիգենցիայի ներկայացուցիչները, կապված «Հյուսիսափայլ»-ի հետ, և սրանց թվում Գ. Սունդուկյանը, որին սպառնում է կալանք, բանտարկություն, աքսոր և այլն, որից դտրձյալ նրան ազատել է Օրբելիանին՝ ոստիկանական և դատաստանական քննության ընթացքին այլ ուղղություն տալով:¹

Գ. Սունդուկյանի անունն այս ապստամբության վերաբերյալ փաստաթղթերում հղումովում է առնվազն 6 անգամ.—

1. 1865 թ. 27—28 հունիսի «Ելույթը» քննող կոմիսիայի որոշման մեջ № 19 ներքո կարգում ենք (фонд особо важных дел ЦГИА Арх. Упр. МВД Груз. ССР № 215, стр. 56а—636; ср. фонд 7/16 дело № 465, стр. 51а—59а).²

«Самым главным двигателем этого замысла, по объяснению Вартанова,² был надворный советник Григорий Измиров, происходящий из сословия почетных граждан, а сообщниками: советник Тифлисского Губернского Правления надворный советник Гавриил Сундукианц, доктор Ротинианц, помощник квартирного надзирателя Салагов (все три происходящие из граждан), состоящий с Ротинианцом и Сундукианцом в товариществе по содержанию типографии, член Тифлисского городского общественного управления Амбарцум Энфиаджианц, редактор печатаемой в типографии Энфиаджианца газеты «Пчела Армении» Петрус Симо нианц и почетные граждане...

«Против Гавриила Сундукианца и свояка его доктора Ротинианца Шермазан-Вартанов приводит вражду их к нему за наложение запрещения на имение последнего из них. Сверх того Сундукианца обвиняет еще как в распространении, во время поездки Измирова в Эчмиадзин, ложных слухов, что будто-бы тифлиские граждане будут платить торговую пошлину наравне с торгующими здесь иностранцами, так и в угрозе ему,

¹ Գ. Սունդուկյանի առնչության մասին 1865 թ. ապստամբության հետ, տես Լ. Մելիքսեթ-Քեկ. — Համաքարների ելույթը Թրիլիսիում 1865 թվականին, Գ. Սունդուկյանը և հայ մտավորականները. — «Սորհրդային Վրաստան» 1938 թ. № 19 և 20: Լ. Մելիքսեթ-Քեկ. — Արխիվային նյութեր Թրիլիսիի համաքարների 1865 թ. «Ելույթի» պատմության շուրջը. «Մախտորիո մոմրե» (Պատմության Տեղեկագիր) 3-րդ, Թր. 1947, էջ 1—144, և առանձին (նյութերը ոռուսերեն, վրացերեն, հայերեն և գերմաներեն, մեր վրացերեն առաջարկով): Լ. Մելիքսեթ-Քեկ. — «Հյուսիսափայլ»-ի զաղափարախոսները և ցարական վարչապետները կոմկասում. — «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳՍ», 1946 թ. № 5, էջ 67—68:

² Լ. Մելիքսեթ-Քեկ, Արխիվային նյութեր Թրիլիսիի համաքարների 1865 թ. «Ելույթի» պատմության շուրջը. Թրիլիսի 1947, էջ 32—33:

³ Սոսքը Թրիլիսիի քաղաքապետ Պաուստ Շերմազան-Վարդանյանին է վերաբերում:

Вартанову, по поводу наложения запрещения на имя его доктора Ротинианца, но доказательство по первому обвинению не представил, а по последнему ссылается на губернатора, в присутствии которого Сундукианц пригрозил ему, Вартанову...».

2. Նույն փաստաթղթի եղրափակման մասում ասված է (տես նույն գործը)¹.

«В виду сих соображений, а также по важности и особенности сего дела, Следственная Комиссия определяет сделать следующее: 1) надворного советника Григория Измирова, помощника комиссара Моисея Салагова, члена Тифлисского городского управления Амбарцума Энфиаджианца, почетных граждан: Назара Назарбегова, Егора Придонова, Даниила Измирова, Ивана и Иллариона Пораковых, Артема Байсаголова, гражданина Степана Сагинова (он же Колот) и Гево Гозалова, одновременно со взятием их к допросу, заключить под стражу в Тифлиском Метехском замке, и когда они будут арестованы, в тот же день приступить к допросу их; 2) ...; 3) Что же касается доктора Ротинианца, редактора газеты «Пчела Армении» Петруса Симонианца и советника Тифлисского Губернского Правления, надворного советника Сундукианца, то, по недостаточности в настоящее время улик, долженствующих служить основанием ко взятию их к следствию и под арест, постановить особое заключение, когда впоследствии при дальнейшем производстве исследования выяснится прикосновенность их к делу с большой осторожностью...»:

3. Նույն քննիչ կոմիտեի գաղտնի քննության արձանագրության մեջ 1865 թ. սեպտեմբերի (?) թվահամարով, ի միջի այլոց, նշված է (տես նույն գործը, էջ 102a—104a)².

«Армянская газета «Пчела» печатается в типографии, принадлежавшей Амбарцуму Энфиаджианцу, Гаврииле Сундукианцу и доктору Ротинианцу...

«Все трое находятся в переписке с различными агентами за границей. К партии этой принадлежат: Григорий Измиров, Амбарцум Энфиаджианц, доктор Ротинианц и служащий в Губернском Правлении Гаврила Сундукианц.

«Первые трое весьма осторожно стараются распространить во всех лучших армянских домах идеи о свободе, порицают действия правительства нашего, вселяют к нему ненависть и уговаривают детей отправлять для воспитания за границу и преимущественно в Базель.

«Измиров и Энфиаджианц в том же духе действуют на народ, разнообразно понятий черни, в духе их интереса, выставляя им на вид обременительные налоги, вводимые правительством, пугая их рекрутчиной, и что правительство положительно стремится обратить их в православную веру и окончательно поработить весь армянский народ.

«Доктор Ротинианц... воспитанник Дерптского университета, и под видом медика везде бывает и проводит в народе те же идеи, чем также

¹ Լ. Մեկեբեբեկ, Արիելային նյութեր թրիլիսիի համբարներ 1865 թ. «Կլուբի» պատմության շուրջը. Թրիլիսի, 1917 թ., էջ 36:

² Նույն տեղում, էջ 55—56:

занимается и Сундукианц; главная же роль Сундукианца заключается в том, что он обязан узнавать, следят ли за их действиями тайная и местная полиция, и, как говорят они, он в этом отношении доставляет обществу довольно положительные и верные сведения».

4. Կովկասի փոխարքայի գլխավոր վարչութիւնի ղատական գործերի ղեկարարամենտի գրութիւնը քննիչ կոմիտիայի նախագահի հասցեով 1865 թ. 17 սեպտեմբերի թվահամարով՝ Գարրիել Սունդուկյանի և Գալուստ Շերմագան-Վարդանյանի բարոյական կերպարի մասին, ըստ ժանդարմների կորպուսի 6-րդ շրջանի պետ ղեներալ-լեյտենանտ Մինկվիցի¹ սովյալներին (տես նույն գործը, էջ 108a—109a)²

«...Генерал-лейтенант Минквиц, представляя извлечение это при рапорте от 10 сего сентября за № 119, за отсутствием великого князя Наместника генерал-адъютанту князю Орбелиани, присовокупляет, что показанный в числе прочих лиц Гаврила Сундукианц более других известен ему за человека честных правил, благонамеренного и умного настолько, чтобы ясно понимать выгоды положения армянского народа под благотворными законами нашего правительства; остальные лица хотя ему известны менее, но, судя по их образованию, думается, что и они не чужды тех же мыслей вытекающих прямо из настоящего их спокойствия и благосостояния. Затем генерал-лейтенант Минквиц объясняет, что бывший городской голова Калуст Шермазан-Вартанов, сколько он знает, известен за человека неблагонамеренного и недобросовестного: обвиняя эти лица голословно, дает право думать, что этим поступком, происходящим может быть из личных его интересов, желанием отклонить от себя могущее возникнуть подозрение в его собственной виновности, и потому генерал Минквиц не может дать веры его оговору, как бездоказательному и не принимаемому законами, а тем более делать какие-либо распоряжения, не входящие в круг его служебных обязанностей».

5. Կովկասի փոխարքայի՝ Գառավարիչ Սենատի հասցեով ուղարկված ղեկուցադրում (ռապորտում) 1869 թ. 1 օգոստոսի թվահամարով, ի միջիայլոց, ասված է (фонд ЦГИА 7/20, дело № 2, стр. 326—44a)³

«...Вартанов заявил обвинение противу следующих лиц: надворного советника Сундукианца и свояка его доктора Ротинианца, что они питают к нему вражду за наложение запрещения на имение последнего и что Сундукианц, сверх того, распространял ложные слухи, что будто-бы тифлисские граждане будут платить торговую пошлину наравне с иностранцами...

«Следственная комиссия, на основании его (Вартанова) заявления, постановлением, 28 июля [1865 г.] состоявшимся, определила: поименованных в объяснении Вартанова лиц, за исключением Ротинианца, Симо-

¹ Երբրենախի նախկին ղինվորական նահանգապետն է, որի ղիվանատան վարիւն էր Գ. Սունդուկյանը 1853—1858 թթ.:

² Լ. Մելիքսեթ-Քեկ, արխիվային նյութեր, էջ 82:

³ Նույն անդում, էջ 102:

нианца и Сундукианца, заключить под стражу и затем приступить к допросу их...»:

6. Եր. Օրբելիանիի անձնական արխիվում պահված մի թղթում, որ ինքն է գրել մատիտով, վրացերեն, «Դալավի տան ավերման պահին եղել են» նյութի շուրջը, ի միջի այլոց, 3-րդ կետում կարդում ենք (Վրացական ՍՍՌ ԳԱ Վրաստանի պետ. թանգարանի A Փոնդի № 155a, XVI-րդ կապոց):¹

«Սունդուկյանց: Իվան Աղամիչ Փորաքովն ասաց գալավին (այսինքն Թրիխսիի քաղաքագլուխ Դալուստ Շերմազան-Վարդանյանին. Լ. [Մ.-Բ.], որ կիրակի օրը, երբ ոստիկանատան առաջ ժողովուրդ էր հավաքված, Սունդուկյանցը այս ու այն տեղ խոսում էր ժողովրդի հետ [հասկացնելով], որ գալավան է մեղավոր և պիտի պատժվի»:

Այսպիսով, պաշտոնական, մասամբ և ոչ պաշտոնական փաստաթղթերից քաղված այս մեջբերումները միաբերան վկայում են, որ Գ. Սունդուկյանն ուղղակի թե անուղղակի կերպով կապված է եղել 1865 թ. 27—28 հունիսին Թրիխսիում պայթած համբարների (արհեստավորների) ապստամբության մասնակիցների հետ, լինելով նրանց «գրդիչների» կամ «գրգռիչների» շարքերում, իրրև շարժման «գաղափարախոսներից» մեկը:

* * *

Գ. Սունդուկյանն առանձին սիրով է հիշում վրաց բանաստեղծ և աղագրագետ, իրեն հասակակից Ռափիել Էրիսթավուն (1824—1901)², որին երախտապարտ էր հատկապես «Պեպո»-ն վրացերենի վերածելու գործում օժանդակելու համար դեռևս 1874 թվին, որից հետո միայն՝ 1875 թ. նոյեմբերի 27-ին այն առաջին անգամ բեմադրվեց վրացերեն լեզվով:

«Պեպո»-ի՝ 1880 թվին ժուռնալ «Իվերիա»-ում և առանձին հրատարակութամբ ևս լույս տեսած վրացերեն թարգմանության առաջարանը սկսվում է Գ. Սունդուկյանի դեպի Ռ. Էրիսթավուն արտահայտած երախտագիտական զգացմունքների խոսքերով. «Տպագրելով վրացերեն այս իմ երկասիրությունը՝ նախ և առաջ պարտք եմ համարում սրտագին շնորհակալությունս հայտնել բանաստեղծ իշխ. Ռափիել Էրիսթավուն, որն եղբայրական օգնություն ցույց տվեց ինձ 1874 թվին, երբ այս երկասիրությունը թարգմանում էի»: Ապա Գ. Սունդուկյանը նշում է Դավիթ ավագ քահանա Յարալյանի և Իոսեբ Բաքրաձեի անուններն ևս, որոնք նմանապես որոշ օժանդակություն են ցույց տվել իրեն³:

Առանձնապես կարևոր է նշել Գ. Սունդուկյանի մասնակցությունը Ռ. Էրիսթավու գրական գործունեության 50-ամյա հորելյանի նշման պահին, որ տեղի ունեցավ 1895 թ. հոկտեմբերին:

¹ Արխիվային նյութեր... էջ 143—144: Հմմ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Համբարների ելույթը Թրիխսիում 1865 թվականին. Գ. Սունդուկյանը և հայ մտավորականները. «Ն. Վրաստան» 1938 թ. № 20: Նույնի—«Հյուսիսափայլ»-ի գաղափարախոսները և ցարական վարչապետները Կովկասում. «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ» 1946 թ. № 5, էջ 67—68:

² Ռ. Էրիսթավու մասին տես՝ Գ. Ասատուր, Մերձարևելքի գրականության պատմություն. Վրաց գրականություն Լ. Նմուշներ պոեզիայից. Երևան 1931, էջ 61—65:

³ «Իվերիա» 1880 թ. № 3, էջ 207, առանձին հրատ. Թբ. 1880, էջ 3:

Ի պատիվ Ռ. Էրիսթավու 1895 թ. 29 հոկտեմբերին կազմակերպված ճաշկերույթի մասին, որին ներկա է եղել մոտ 300 հոգի, մանրամասն գրում է ժուռնալ «Կվալի»-ն: Նույն այդ ճաշկերույթին բաժակահաճառեր են արտասանել Գր. Արաշիձեն, Ակակի Ծերեթևկին, Վելիկին, Իլիա Ծավճավաձեն, Գիորգի Ծերեթևկին, Կ. Ջխեիձեն, Իվանե Մաչարելին, Գարբիել Սունգուկյանը, Մ. Մաչարելին և ուրիշները, որոնց արտասանած խոսքերը մի առ մի տպված են նույն ժուռնալում:

Մասնավորապես Գ. Սունգուկյանի մասնակցության մասին այդ խնճուղքին նույն ժուռնալում կարդում ենք հետևյալը.

«Ումեցին նաև հայ թատերադիր Սունգուկյանցի կենացը, որին պ-ն Սունգուկյանցը պատասխանեց հետևյալ հայտարարությամբ հասարակության առաջ.

«Ես այսօր առանձնակի կենացի արժանի չեմ, քանի որ այս տեսակ բոլոր կենացները միմիայն հորելյարին են պատկանում: Այս ևս կհայտնեի մեր (այսինքն՝ հայոց. Լ. Մ. Մ.) ազգի անունից, որ մենք՝ Վրաստանում սնված հայերս՝ վրաց հողով ենք հասունացած, Վրաստանի փորձանքի և ուրախության մենք միշտ հաղորդակից ենք եղել ու կլինենք»¹

* * *

Վրաց մեծ բանաստեղծ, վիպագիր, հրապարակախոս և հասարակական գործիչ Իլիա Ծավճավաձեն (1837—1907) մեծ հոգատարությամբ էր վերաբերում դեպի Գ. Սունգուկյանը,² չնայած այն հանգամանքին, որ երբեմն նույնիսկ սուր քննադատության էր ենթարկում նրա ստեղծագործությունը:

Իլիա Ծավճավաձեի շնորհիվ է, որ Գ. Սունգուկյանի երկերը մատչելի դարձան վրաց ընթերցող հասարակության համար:

Այս ասելով՝ մենք ի նկատի ունինք գոնե այն երկու երկը, որոնք իրար ետևից լույս տեսան վրացերեն թարգմանությամբ Բ. Ծավճավաձեի «Իվերիա» ժուռնալում, այն է՝ 1879 թվին «Վարինկի վեչերը», Պ[ետրև] Ու[միկաշվիլ]ու թարգմանությամբ, № 5—6, էջ 74—116, և 1880 թվին «Պեպո»-ն, հեղինակի թարգմանությամբ, № 3, էջ 205—317, և առանձին գրքույկով՝ Թրիլիսի 1880, 80 էջ:

Նույն Իլիա Ծավճավաձեի «Իվերիա» թերթի էջերը միշտ հյուրընկալել են Գ. Սունգուկյանին այս կամ այն առիթով ելույթի համար, «Նամակ խմբագրության»-ի ձևով, օրինակ 1886 թ. № 49, 1901 թ. № 99 (այս նամակները հայերեն թարգմանությամբ տես այս հոդվածի «Հավելված» բաժնում):

Վերջապես, «Իվերիա» ժուռնալը թե թերթը սիստեմատիկ կերպով արձագանքել է Գ. Սունգուկյանի պիեսների բեմադրությանը մանավանդ վրացերեն՝ համառոտ կամ ընդարձակ հաշվետվություններ տալով նրանց

¹ «Կվալի» 1895 թ. № 46, էջ 8:

² Իլիա Ծավճավաձեի հոգատար վերաբերմունքը դեպի սկսնակ ուժերն արտահայտված է, ինչպես հայտնի է, առանձնապես մեծ Ստայինի նկատմամբ, որի բանաստեղծությունները տպվեցին նույն ճավճավաձեի «Իվերիա» թերթում 1895 թ. №№ 123, 218, 234 և 280 (ապա և «Կվալի»-ում 1896 թ. № 28), որոնց հայերեն թարգմանությունը (Արմենակ Մուրվալյանի) զետեղված են «Սորհրդային Գրականության» 1939 թ. № 12-ում:

մասին, սկսած 1877 թվից (№ 6) և մինչև 1904 թ.: Սրանցից մեկում (1886 թ. № 44) նույնիսկ նշված էր, որ «Գ. Սունդուկյանի «Խաթարալա»-ս և առհասարակ նրա բոլոր պիեսները վրաց բեմի վրա ավելի հաջող են կատարվում, քան թե հայկականում, որ ինքը պատվարժան հեղինակն էլ լավ գիտե՞ս:

Ինչ վերաբերում է անձամբ Իլիա ճավճավաձեին, նա լուր մի անգամ է առիթ ունեցել արտահայտվելու Գ. Սունդուկյանի ստեղծագործության, հատկապես «Պեպո»-ի մասին:

Դա՛ «Իվերիա» թերթի 1889 թ. 4 փետրվարի (№ 27) առաջնորդըն է, նվիրված «Մուրճ» ամսագրի լույս տեսնելուն, որի առաջին իսկ համարում զետեղված էր Դեորգ Չմշկյանի «Գ. Սունդուկյանց. կենսագրական ուսվածք»-ը:

Քննադատելով Գ. Չմշկյանի հոդվածը և մեր թատերագրին «պատվարժան հայ դրամատուրգ պարոն Սունդուկյանց» անվանելով, Իլիա ճավճավաձեն, ի միջի այլոց, այն միտքն է արծարծում, որ «Վրացական [թատրոնական] ռեպերտուարում, չհաշված թարգմանական գործերը, [այնուամենայնիվ] «Պեպո»-ն ավելի հաջող գործ է՝ Թեև Գ. Սունդուկյանի տված կինտոյի դրական կերպարը Ի. ճավճավաձեին, ըստ երևույթին, չէր քավարարում:

* * *

Վրաց զրականություն և ոչ մի ներկայացուցչի հետ Գ. Սունդուկյանի հարաբերությունն այնպես սերտ և մտերիմ չի եղել, ինչպես բանաստեղծ Ակակի Ծերեթելու հետ (1840—1915): Այդ հարաբերությունը կամ, ավելի ճիշտն ասած, անձնական բարեկամությունը, որն իր ժամանակին մի տեսակ արտահայտությունն էր հայ և վրաց ժողովուրդների ու զրականությունների եղբայրակցության, ամենափայլուն օրինակն էր հայ և վրաց ինտելիգենցիայի մերձեցման և փոխադարձ կապի:

Սակայն կարևորն այն է, որ Ա. Ծերեթելին ուղիղ 15 տարով Գ. Սունդուկյանից կրտսեր լինելով՝ նայում էր վերջինիս իբրև իր մեծ եղբոր:

Ուստի և միանգամայն հասկանալի է, թե ինչու ընդամենը 11 տարվա ընթացքում Ա. Ծերեթելին այս կամ այն առիթով մեկը մյուսի ետևից նվիրում է ի. Սունդուկյանին առնվազն 3 բանաստեղծություն. 1. «Մտերիմիս (նվիրում եմ պ-ն Սունդուկյանցին)», 8 տուն, 1901 թվին՝ «Պեպո»-ի բեմադրության 30-ամյակի առթիվ. 2. «Գ. Ն. Սունդուկյանցին», 4 տուն, 1910 թվին՝ հավանական է նրա ծննդյան 85-ամյակի առթիվ. և 3. «Դարբիել Սունդուկյանցի թաղման օրը», 4 տուն, 1912 թվին՝ նրա թաղման օրը զերեզմանի առաջ արտասանած:¹

Ահա Ա. Ծերեթելու այս բանաստեղծությունները հայերեն թարգմանություններ:

¹ Իլիա ճավճավաձե, Երկեր, լրիվ ժողովածու. հատոր 11, Պավել Ինգորովայի խմբագրություն, Թբիլիսի 1941, էջ 195—198, հատկապես 195, 198 նաև 648:

² Երեքի բնագրերը համապատասխան կոմենտարներով տես. Լ. Մելիքսեթ-Ֆեկ, Գ. Սունդուկյանը վրացական պոեզիայում (վրացերեն). «Լիտ. Սաքարթվելո» 1940 թ. № 3:

Ա

Բարեկամիս

(Նվիրում եմ պ-ն Սունդուկյանցին)¹

Առանց ազգի խրաբույժյան ես
Բարիքներ եմ մաղթում նրան,
Ով որ մարդ է ճշմարտապես՝
Արեգական լույսի նրման:

Միության և եղբայրության
Ոչ մի բան չեմ գերադասել.
Ուժը սրբանց զուգակցության
էն գրվիցն եմ ասել, ասել:

Բայց ինչքարած, թե մի ընկեր
Տունըս մըտավ, սարքեց դավեր,
Եվ ինձ ասաց. «Իմըս իմն է»,
«Ինչ որ քոնն է, այն էլ իմն է»:

Եղբայր, ինչու գրկանք կըրեմ,
էլ չես պաշտում երկինք-դետին...
Դու էլ կացիր... ես էլ լինեմ.
Չենք իսանգարի մեկը մեկին:

Շիրմիս վըրա պալատ շինես,
Աշխատեցնես քարկոփ մըշակ.
Դու ինձ տատասկ քաղել ստիպես,
Ինքըդ քաղես վարդ-մանիշակ:

Սրա անունն է ոտնահարում,
Եվ անարդար գըջում-գըփում...
Մոռացել ես, չես տարբերում՝
Վերև կայծակ, ներքև խլըրտում...

Եղանակն է մերթ լավ, մերթ վատ,
Այսօր այսպես, վաղըն այնպես.
Տիեզերքի օրենքն է այդ...
Չես խուսափի՝ ինչ էլ անես:

Թե ինձ ճընշես... լինես խըղճուկ,
Կըհըրճվի լսկ թըշնամին մեր.
Ինքներս կասենք. «Վայ և եղուկ»,
Իսկ նա՝ «մրավալ ժամի-ի՛-եր»:

(Թարգմ. Լ. Մելիքսեթ-Բեկի)

¹ Բնագիրը՝ «Մեզորարս (վուճղվնի ր-ն Սունդուկյանցս)» «Իվերիա» թերթը 1901 թվի № 124. Լ. Մելիքսեթ-Բեկ. հիշյալ հոդվածը: Ակակի Մերեթելի. Երկերի լրիվ ժողովածու, հ. 1, Բանաստեղծություններ, Ա. Արաշելիի և Պ. Ինդրոզվայի խմբագրությամբ, Քբիլիսի 1940, էջ 603-004: Հայերեն թարգմանությունը (մեր)՝ Ակակի Մերեթելու Կ. Սունդուկյանին նվիրված բանաստեղծությունները, «Արշավ» (Քբիլիսի). 1940 թ., № 3, էջ 20:

Բ1

Գ. Ն. Սունդուկյանցին

Ես մի վրրացի, իսկ դու հայ ես մի,
 Բայց մենք երկուսով եղբայր ենք հիմի.
 Երկուսս էլ զավակ նույն հողի, ջրրի,
 Եվ նույն բրնության և նույն լեռների:

Մեծ Կովկասը իր գազաթներով վե՛ն
 Բընածին ձիրքիդ հասակ է տրվել.
 Եվ բրնությունն այս փարթամ ու ծաղկուն՝
 Դույններ է տրվել տանջված քո հոգուն:

Եվ տառապանքիդ հուզումներն անվերջ
 Հյուսել ես հըմուտ՝ քո երկերի մեջ.
 Ու ժառանգել ես անմահ մի անուն,
 Սեռունդից սերունդ դարձել մի՛ս, արյուն:

Բազմաթիվ մարդկանց հույզ ու տենչերին
 Միացնում եմ ես բաղձանքները իմ.
 Խոնարհվում եմ մեծ գործիչի առաջ,
 Կըրասեր եղբոր պես՝ մեծ եղբոր առաջ:
 (Թարգմ. Գ. Մարյանի)

Գ2

Գաբրիել Սունդուկյանցի թագման օրը²

Այսօր հողին են հանձնում
 Ուշիմ մարդու սառած դին,—
 Որ լույս-շողեր էր սըփռում
 Մե՛ր տարացեղ աշխարհին:

Փայփայում էր հրաշագեղ
 Իդձեր, տենչեր հուսալի.
 Մարդ էր փընտրում ամեն տեղ
 Եղբայրական սիրով լի:

¹ Բնագիրը՝ «Գ. Ն. (սխալմամբ գրված և տպված է Ս. Լ. Մ.-Բ.) Սունդուկիանցան» Լ. Մելիքսեթ-Բեկ, հիշյալ հոդվածը՝ Ակակի Մերեթելի, Երկեր, հ. 1, էջ 822: Հայերեն թարգմանությունները՝ անստորագիր—«Ս. Վրասսան», 1937 թ. № 73, 1940 թ. № 123, Գ. Մարյանի և Ա. Մեհրաբյանի՝ «Ս. Հայաստան» 1937 թ. № 37, Գ. Մարյանի՝ ժողովածուում «Ակակի Մերեթելի», Երևան 1940, էջ 44, «Ս. Հայաստան» 1940 թ. № 143, «Գրական թերթ» 1940 թ. № 17, «Արշավ» 1940 թ. № 3, էջ 21, Հովհ. Կարապետյանի (Կարայանի)՝ «Հոկտեմբերյան Սերունդ» (Թբիլիսի) 1940 թ. № 1, էջ 11: Մանրամասն բիր-լիոգրաֆիան՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Ակակի Մերեթելու երկերի հայերեն թարգմանությունները. «Բիրլիոգրաֆիկա Մոսկով», Թբիլիսի, № 2—3, 1941 թ., էջ 220—221:

² Բնագիրը՝ «Գաբրիել Սունդուկիանցիս գամարխվիս զղեսս». «Թեմի» շաբաթաթերթ 1912 թ. № 64. Լ. Մելիքսեթ-Բեկ, հիշյալ հոդվածը—«Լիտ. Սաքարթվելո» 1940 թ. № 3: Ակակի Մերեթելի, Երկեր, հ. 1, էջ 839: Հայերեն թարգմանությունը (մեր)՝ «Ս. Վրասսան» 1940 թ. № 142, «Արշավ» 1940 թ. № 3, էջ 22:

Մարդը միայն մարդ լի՞նի,
 Բոլորն իրար հավասար,—
 Հեղինակըն անվանի
 Քարոզում էր անդադար:

Վրսեմ գործով վայելեց
 Ժողովրդի սեր, հարզանք.
 Հըստակությամբ վաստակեց
 Հավերժ քուն և մեծարանք:

(Թարգմ. Լ. Մելիքսեթ-Բեկի)

* * *

Սակայն Ա. Ծերեթելին միակը չէ վրաց դրականության, ասել է պոեզիայի՝ բնագավառում, որը գնահատել է Գ. Սունդուկյանին:

Նույն բնագավառում հայտնի է երկու «ձոն» ևս, նվիրված Գ. Սունդուկյանին. ա. Սկանզար-Նովայի (Սկանզարյանի)՝ «Դարբիել Նիկիտիչ Սունդուկովին», 1875 թ. փետրվարի 10-ի թվահամարով¹, և բ. Կոնստանտին Մեսխիի՝ «Դարբիել Սունդուկյանցին»: 1901 թ. ապրիլի 29-ի թվահամարով:²

Գ. Սունդուկյանի ստեղծագործությանը և պիեսների բեմադրություններին վրաց թատրոնում հաճախակի արձագանքել են այնպիսի գործիչներ, ինչպիսին են Պ. Ումիկաշվիլին («Վարինկի վեչերի» թարգմանիչը), Ղիփիանին, Ս. Մեսխին, Անտոն Փուրցելաձեն և շատ ուրիշները³: Գ. Սունդուկյանը մոտ է եղել նաև հայտնի հրապարակախոս և հասարակական գործիչ Ն. Յ. Նիկոլաձեի հետ:

Հայ մեծ թատերագրի ծառայությունը վրաց թատրոնին ցայտուն կերպով շեշտված է վրաց թատրոնական և այլ գործիչների ողջունի խոսքերում «Պեպո»-ի բեմադրության 30-ամյակի առթիվ 1901 թվին, որոնք հասել են մեզ ոուսերեն և վրացերեն լեզուներով⁴, և սրանց թվում Կոնստանտին Դիմիտրիի Ղիփիանու ընդարձակ ուղերձը 1901 թ. ապրիլի 29-ի թվահամարով:⁵

¹ Բնագիրը՝ «Դարբիել Նիկիտիչ Սունդուկովս», «Սալիխո սաղանդարի», 4-րդ հրատ., Թբիլիսի, 1895, էջ 217—219:

² Բնագիրը՝ «Դարբիել Սունդուկիանցս», որ գտնվում է Հայաստանի Գրական Թանգարանում (Գ. Սունդուկյանի արխիվում). հրատարակված՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Գ. Սունդուկյանը վրացական պոեզիայում. «Լիտ. Սաքարթվելո» 1940 թ. № 3:

³ Վրացական ժուռնալների և ժողովածուների անալիտիկ բիրլիոդրաֆիա, պրակ, II (1877—1892), հրատ. Վրացական ՍՍՌ Կ. Մարքսի անվան Հանրային գրադարանի, Թբիլիսի 1941, ըստ անվանացանկի (էջ 400): Նույնը. պրակ III (1893—1905), 1944, ըստ անվանացանկի (էջ 820): Երկուսն էլ վրացերեն է: Մասամբ տես՝ Գ. Սունդուկյանց, Երկերի լիակատար ժողովածու մի հատորով. Երևան, 1934, էջ 522—523:

⁴ Սրանց մի մասը Հայաստանի Գրական Թանգարանում է գտնվում:

⁵ Այս ուղերձի, ինչպես և ողջունի մի քանիսի ոուսերեն բնագրերը տես Մ. Մ. Меликсет-Бек, К биографии Г. Сундукяна (В связи с 70-летием первой постановки комедии „Пэпо“. «Արմֆանի Տեղեկագիր» 1941 թ. № 2, էջ 19—24: Վրացերեն թարգմանությունը մեր հոդվածներում. Լ. Մելիքսեթ-Բեկ, Գ. Սունդուկյանը վրացական պոեզիայում. «Լիտ. Սաքարթվելո» 1940 թ. № 3, Գ. Սունդուկյանը և վրաց թատրոնը.

Առանձնապես հետաքրքիր են Գ. Սունդուկյանի երբեմնի խոհարար Յակոբ Թութաձեի հուշերը Գարրիելի կյանքի ինտիմ մի շարք գծերի մասին, որը՝ Թութաձեից լսելով՝ զրի առավ և հրապարակ հանեց Իլիա Ճավճավաձեի «Իվերիա»-ի երբեմնի աշխատակից Իլիա Ջուրարաշվիլի-էլեի-թերիձեն (այժմ կենդանի)¹։ Մի շարք այլ գծեր Գ. Սունդուկյանի կյանքից նշված են մեր² և հանդուցյալ զոց. Իվ. Բեգլարովի³ հոդվածներում (վրացերեն)։

* * *

Հավելված

Ինչպես սույն հոդվածի ներածականի ծանոթադրություններից մեկում նշվեց, Գ. Սունդուկյանի երկերից վրացերեն թարգմանություններ ցարդ հրատարակված են. 1. «Վարինկի վեչերը»⁴, 2. «Պեպո»-ն⁵, 3. «Գիշերվան սարը խեր է»⁶, և 4. «Կտակ. Իմ մահն ու թաղումը»⁷։ Մնացած երկերի վրացերեն թարգմանությունները ձեռագիր վիճակում պահվում են Թբիլիսիի թատրոնական թանգարանում, իսկ մեկի, այն է՝ «Օսկան Պետրովիչը էն կինքում»-ի մի վարիանտը, նույնիսկ Հայաստանի զրական թանգարանում (Գ. Սունդուկյանի արխիվում)⁸։ Բացառությունն սն կազմում միմիայն այն պիեսները, որոնք վրաց թատրոնում չեն բեմադրվել։

Բացի այս ամենից, միմիայն վրացերեն լեզվով են առկա Գ. Սունդուկյանի մի շարք նամակներ՝ ուղղված վրաց պարբերականների խմբագրություններին, այն է «Դրոներա»-ի 1883 թ. № 219-ում և Իլիա Ճավճավաձեի «Իվերիա»-ի 1886 թ. № 49 և 1901 թ. № 99-ում։

Քանի որ այս նամակների վերաբերյալ թե՛ հայ և թե՛ վրաց զրականություն մեջ միմիայն կցկտուր տեղեկություններ կան⁹, մինչդեռ հայ ընթերցողի համար զրանք միանգամայն անմատչելի են, ստորև տալիս

նույն տեղում 1940 թ. № 15: Կ. Լիփիանու ուղերձի հայերեն թարգմանությունը մի փոքր կրճատված ձևով (վերջին մասում) տես Ծ. Շահաղիզ. Գարրիել Սունդուկյանց (ծննդյան հարյուրամյակի առթիվ). «Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտություն և Արվեստի Ինստիտուտի» № 2, Երևան 1927, էջ 147—148:

1 Իլիա Ջուրարաշվիլի (էլեիթերիձե), Գարրիել Սունդուկյանցը իբրև մարդ (Միջանի էպիգոզ նրա ինտիմ կյանքից). «Մնաթորի» 1937 թ. № 6—7, էջ 189—195 նույնի հոդվածը «Լիտ. Սնարթվեո»-ում 1937 թ. № 15:

2 Լ. Մելիքսեթ-Բեկ, Գարրիել Սունդուկյանի ծննդյան 100-ամյակի առթիվ. «Կոմունիստ» օրաթերթ, Թբիլիսի 1926 թ. № 9:

3 Իվ. Բեգլարով, Հայ ժողովրդի մեծ թատերագիրը (Գարրիել Սունդուկյանի մահվան 25-ամյակին). «Մնաթորի» 1937 թ. № 6—7, էջ 186—188:

4 «Իվերիա» 1879 թ. № 5—6, էջ 74—116:

5 Նույն տեղ 1880 թ. № 3, էջ 205—287: Հմմ. նաև Շ. Թարուկաշվիլի, Եղբայրակից սովետական ռեսպուբլիկանների զրականությունը, Բ. հրատ, Թբիլիսի 1946, էջ 579—599 (համառոտ):

6 Առանձին զրքույկով, Թբիլիսի 1911:

7 «Թեմի» 1912 թ. № 65:

8 «Օսկան Պետրովիչը էն կինքում. Կտակ մի արարվածով. Գարրիել Սունդուկյանցի (թարգմանություն հայերենից)» ձեռագիր տետրի ծավալով 8 էջ:

9 Գ. Սունդուկյանց, Երկերի լիակատար ժողովածու, մի հատորով, Կատակերգու-թյուններ, արձակ երկեր, նամակներ, խմբագրություններ Ս. Հարությունյանի. Երևան,

ենք զրանց թարգմանությունները ևս, որպեսզի զոնե այս միջոցով նպաստած լինենք Գ. Սունդուկյանի խնդրով զբազվող մասնագետ-գրականագետներին ըստ կարելիության լայն և սպառիչ կերպով ընդգրկել մեծ թատերադրի կյանքի և ստեղծագործության մոմենտները:

Ահա և այդ նամակները մեր թարգմանությամբ՝ վրացերենից:

Ա

(«Գրոտերա» 1883 թ. № 219)¹

«Պարոն խմբագիր.

«Գրոտերա» թերթի № 213-ում դուք տպեցիք Պ. Ա. Նա-լիի հոդվածը², ուր նկարագրված է հոկտեմբերի 20-ին կազմակերպված ներկայացումն ի պատիվ նշանավոր թատերագիր Ա. Ն. Օստրովսկու³:

«Այս հոդվածում իմ մասին զրված է հետևյալը.

«Սունդուկյանցն արդարացի չվարվեց և հասարակությանը շնորհակալություն հայտնեց Օստրովսկու լոժայից: Պ-ն Սունդուկյանցի այսպիսի տարօրինակ վարմունքը շատերն անքաղաքավարություն համարեցին, և մենք կարծում ենք, որ միանգամայն իրավացի ենք»:

«Ես պիտի հայտնեմ, պարոն խմբագիր, որ հիշյալ ներկայացման միջոցին պ. Ն. Յ. Նիկոլաձեն, որն Օստրովսկու հետ զրուցում էր լոժայում, իջավ պարտեր, ուղղակի ինձ մոտեցավ և ասաց, որ ես ձեզ պիտի ներկայացնեմ պ. Օստրովսկուն և սրա համար, հենց որ նշան տամ, իսկույն ևետ բարձրացեք: Ես հայտնեցի պ. Նիկոլաձեին, որ պ. Օստրովսկին ինձ արդեն ճանաչում է և, հետևապես, կարիք չկա ինձ նրան նորից ներկայացնելու: Պ. Նիկոլաձեն չթողեց ինձ և նշեց, որ իրոք պ. Օստրովսկին, ինչպես ինքն ևս ասաց, ձեզ արդեն ճանաչում է, սակայն քանի որ ես նրան խոստացա, որ այստեղի զրոհներին կներկայացնեմ ձեզ, լավ չի լինի, որ այնտեղ չլինեք: Էլ ճար չկար՝ համաձայնվեցի: Իմ պիեսի ներկայացումից առաջ պ. Նիկոլաձեն կրկին եկավ ինձ մոտ, իր խնդիրը կրկնեց և հետն էլ ավելացրեց, որ երբ ձեր պիեսը կավարտվի, անպայման ձեզ կսպասենք: Հենց որ պիեսն ավարտվեց, ես իսկույն ևետ բարձրացա և, երբ անցքում պ. Նիկոլաձեի հետ էի խոսում, պ. Օստրովսկին իր լոժայից դուրս եկավ և, հենց որ ինձ նկատեց, բացականչեց. «Հասարակությունը ձեզ է կանչում, շուտով եկեք, շնորհակալություն հայտնեք»: Եվ՝ այս խոսքերն ասելով՝ մտցրեց ինձ իր լոժան, որտեղից ես հասարակությանը շնորհակալություն հայտնեցի:

«Մի քան արդյոք անիրավացի կամ անքաղաքավար է եմ վարվել ես, թող ընթերցողը դատե:

Գարրիել Սունդուկյանց»:

1934, թ. XXV | Սուրեն Հարությունյան, Գ. Սունդուկյանի կյանքն ու ստեղծագործությունը, վերլուծական տեղաբնակ. Երևան, 1934 թ., էջ 57: Ի. Գրիշաշվիլի, Հին թատրոնում (վրացերեն), Քրիիսի, 1949, էջ 95—98:

¹ Արտատպված է Ի. Գրիշաշվիլու գրքում. Հին թատրոնում, Քրիիսի 1948 էջ 95—98:

² Ա. Նա-լի. Վրաց թատրոնը. «Գրոտերա» 1883 թ. № 213:

³ Ներկայացվել են «Եկամավոր տեղ» (Օստրովսկու), «Գիշերվան սարբը խեր է» (Սունդուկյանի) և «Ինչ տեսել ես, էլ չես տեսնի» (Ցաղարելու):

(«Իվերիա» 1886 թ. № 49)¹

«Նամակ խմբագրին.

«Պարոն խմբագիր.

«Նոնարհարար խնդրում եմ տեղ տաք ձեր պատվարժան «Իվերիա» թերթում այս իմ փոքր նամակիս:

«Մի քիչ առաջ «Իվերիա»-ի № 44 տպված էր Վալիկո-իայի ոեցենդիան իմ «Սաթարալա» պիեսի մասին, որը վրաց թատրոնական խումբը ներկայացրեց փետրվարի 22-ին:²

«Պարոն ոեցենդենտը ի միջի այլոց գրում է. «Մեղ զարմացում է այն հանգամանքը, որ հեղինակը (այսինքն ես) ինչպես լայեղ արավ այնպիսի անգթություն, անկարեկցություն և նույնիսկ անարդարություն Մարգարիտի նկատմամբ: Տգեղ աղամորդին, այն էլ աղջիկը, մեր կարծիքով, զթասրտություն և կարեկցություն արժանի է և ոչ թե ծաղրի ու բիրտուռ անելու: Դա՛ մեծ սխալ է և, ըստ ամենայնի, անթույլատրելի սխալ»:

«Ահա քսան տարի է, ինչ «Սաթարալա»-ն հայկական բեմի վրա է ներկայացվում, և տաս տարի էլ, ինչ վրացական բեմի վրա: Այս պիեսի մասին շատ ոեցենդիա է գրվել ու շատ էլ խոսվել է, և որ կողմից էլ կուզեք, որ չեն տնտղել: Սակայն այն, ինչ որ պ-ն Վալիկո-իան ասաց Մարգարիտի մասին, ոչ մի ոեցենդենտ չի գրել և ոչ մի հանդիսատեսի կողմից էլ չի նշվել. չեն նշել ու չեն գրել այն պատճառով, որ իմ մտքովս սկի էլ չի անցել Մարգարիտի նկատմամբ անգթություն, անկարեկցություն և նրան բիրտուռ անելը: Ընդհակառակը, հիշյալ պիեսը գրելու միջոցին իմ գլխավոր ցանկությունն այն էր, որ հանդիսատեսի մեջ ստեղծեի զթասրտություն Մարգարիտի նկատմամբ. ուստի և ես նսան դուրս բերի իրեն բարեսիրտ և աղնվարար աղջիկ: Այս բոլորն ավաշկարա երեվում է Մարգարիտի խոսքերից:

«Ի՞րև ապացույց սրա շատ վաստեր կրերեի հենց նույն պիեսից, սակայն, քանի որ այդ շատ տեղ կգրավեր թերթում, այս պատճառով այս մտադրությունը թողի, լիահույս լինելով, որ ընթերցող հասարակությունը լավ կհիշի այս պիեսի բովանդակությունը, քանի որ այն ոչ թե մեկ կամ երկու անգամ է խաղացվել վրաց բեմի վրա:

«Մարգարիտին ոչ թե ես եմ բիրտուռ անում կամ անգութ ու անկարեկից վերաբերվում նրան, այլ պիեսի այն գործող անձինք, որոնք նրա շուրջն են խմբված, տանջում են նրան ու այնպես են նայում նրան, կարձես թե սաղացնելու ապրանք լինի նա: Եթե կուզեք, հենց այս հանգամանքն է նրա պատճառը, որ դիտակից աչքով դիտող հասարակությունը սովորաբար կարեկցությամբ է նայում խեղճ Մարգարիտին, և

¹ Մասամբ օգտագործված Սուրեն Հարությունյանի կողմից.—Գ. Սունդուկյանց, Երկերի լիակատար ժողովածու մի հատորով, Երևան, 1934, էջ XXV1—Գ. Սունդուկյանի կյանքն ու գործունեությունը, Երևան 1934, էջ 37:

² Վալիկո-իա, վրաց թատրոնը, «Իվերիա» 1886 թ., № 44:

քանի հանդիսատեսի աչքերից է արցունք թափվել այս աղջկա բախտի համար, երբ պիեսը ներկայացվել է ինչպես հարկն է:

Գ. Մունդուկյանց
«Տփիլիսի, փետրվարի 28-ին 1886 թ.»

(«Իվերիա» 1901 թ. № 99)

«Նամակ խմբագրության».

«Երեսուն տարի լրացավ այն օրվանից, ինչ իմ «Պեպո» կատակերգությունն առաջին անգամ բեմադրվեց. և վրացական ու հայկական թատրոնները սա տոնեցին այս օրերս: Այս առիթով ստացա բազմաթիվ շնորհավորանքներ ինչպես մասնավոր անձանց, նույնպես և ընկերությունների ու հաստատությունների կողմից: Շնորհավորում էին Թբիլիսից, Ռուսաց տերություն բազմաթիվ անկյուններից և նույնիսկ արտասահմանից ևս:

«Նս աշխատում էի ինձ համար հավասարապես թանկ երկու ազգի՝ վրացական և հայկական բեմի համար: Աշխատում էի իմ զրվածքներում պատկերացնել մարդկային բարձր զգացմունքներ և ստոր: Սա գնահատվեց, և այս գնահատումը ծնեց երջանկության զգացմունք սրտիս մեջ և խորին շնորհակալության զգացմունք նրանց նկատմամբ, ովքեր զիմեցին ինձ շնորհավորանքով՝ բանավոր կերպով, գրավոր, ճառեր արտասանելով, ձոներ, հեռագրեր և ուղերձներ մատուցանելով:

«Նմանապես շնորհակալության խոր զգացմունք ծագեց սրտիս մեջ այն անձանց նկատմամբ, ովքեր կազմակերպեցին երեք օր տևող տոնակատարություն ի հարգանս իմ՝ ժողովրդական, վրաց ազնվականության և արտիստական խմբի թատրոններում:

«Թույլ տվեք, ողորմած տեր, ձեր թերթի միջոցով ամենասրտալից շնորհակալությունս հղեմ ու անսահման հարգանքի նշան հայտնեմ նրանց, ովքեր որ այս գործում այսպիսի մեծ ուշադրություն ցուցաբերեցին իմ նկատմամբ:

Գարրիել Մունդուկյանց»:

Л. М. Меликсет-Кек

Г. Сундукянц и грузинские классики

Резюме

Краса и гордость армянской драматургии Гавриил Никитич Сундукянц (1825—1912) почти всю свою жизнь провел в Тбилиси, за исключением, конечно, студенческих годов (1846—1850), когда он учился в Петербургском университете, и начального периода служебной деятельности (1853—1858), когда он оказался в «ссылке» в Дербент.

Вступив на литературное поприще с 1863 г., когда появилась первая его комедия «Вечернее чиханье—к добру», Г. Сундукянц полвека подвиг

зался в Тбилиси, обслуживая одновременно и армянскую, и грузинскую сцену, будучи в то же время в близком общении и соприкосновении как с армянскими, так и грузинскими литературными и театральными деятелями.

Отсюда понятно, почему беспристрастный исследователь творчества Г. Сундукянца никак не может пройти мимо тех взаимоотношений, которые сближали его с грузинской средой.

В частности, напрашивается на обследование специальный вопрос об отношениях армянского драматурга к представителям грузинской классической литературы XIX в., как-то: к Александру Чавчавадзе (1786—1846), Григорию Орбелиани (1800—1883), Рафиэлу Эристави (1824—1901), Илье Чавчавадзе (1837—1907) и Акакию Церетели (1840—1915).

1. Г. Сундукянц использовал в комедии «Новый Диоген», законченной в 1869 г., отдельные строфы (1, 2, 3, 4, 11, 13) известного стихотворения Ал. Чавчавадзе «Мухамбаз кутил» (Мухамбази лотиаури), в несколько ином варианте, чем таковое появилось в «Грузинской хрестоматии» проф. Давида Чубинова в Петербурге в 1846 и 1863 г. г. и которое армянский драматург мог услышать в фольклорной версии или иным путем.

2. На основании архивных материалов различных фондов Центрального Гос. Ист. Архива Грузинской ССР, частью опубликованных пишущим настоящие строки раньше (в 1938 и 1946 г. г.), частью же публикуемых здесь впервые, устанавливается близость Г. Сундукянца к поэту Гр. Орбелиани.

3. Близость Г. Сундукянца к поэту и этнографу Раф. Эристави нашла свое отражение, во-первых, в предисловии к грузинскому переводу комедии «Пепо», изданному в 1880 г., где автор благодарит грузинского поэта за «братскую помощь», оказанную ему в 1874 г. при переводе комедии с армянского оригинала, и, во-вторых, в произнесении теплых слов по адресу того же поэта, в ответ на тост за армянского драматурга, при чествовании 50-летия литературной деятельности Р. Эристави в 1895 г.

4. Г. Сундукянц всецело обязан великому поэту и писателю Илье Чавчавадзе в деле публикации своих произведений в грузинском переводе, которые впервые появились в издававшемся И. Чавчавадзе журнале «Ивериа»: «Вечер Варинки» в 1879 г. (№ 5—6) и «Пепо» в 1880 г. (№ 3). Постановки пьес армянского драматурга на грузинской и армянской сцене также систематически находили отклик в том же органе И. Чавчавадзе «Ивериа» (сначала журнал, затем газета), на протяжении нескольких десятилетий; причем в них, между прочим, подчеркивалось, что «пьеса «Хатабала» и вообще все пьесы Сундукянца более удачно разыгрывались на грузинской, нежели на армянской сцене, что прекрасно знает и сам автор». Наконец, Г. Сундукянцу посвящена передовая «Иверии» от 4 февраля 1889 г. (№ 27), написанная самим И. Чавчавадзе, который отмечает, что «в грузинском репертуаре, не считая вообще переводных [запад.-европейских и русских] пьес, «Пепо» более удачная пьеса».

5. Личная дружба связывала Г. Сундукянца особенно с великим поэтом Ак. Церетели. Но важнее всего—это то, что А. Церетели посвятил обаятельному Г. Сундукянцу по меньшей мере 3 стихотворения по различному поводу на протяжении 11 лет: 1) «Другу (посвящаю г-ну Сундукянцу)», 8 строф, 1901 г.; 2) «Г. Н. Сундукянцу», 4 строфы, 1910 г.; и 3. «В день похорон Гавриила Сундукянца», 4 строфы, 1912 г. Стихотворения эти в статье приводятся: первое и третье—в переводе пишущего настоящие строки, а второе—в переводе Г. Сарьяна.

Кроме всего сказанного, следует также отметить, что Г. Сундукянцу посвящены стихотворения на грузинском языке Скандар-Новой (Скандаровым) в 1875 г. и К. Месхи в 1901 г.

О заслугах Г. Сундукянца в истории грузинского театра красноречиво говорит К. Д. Кипиани в своем «адресе» (на русском языке), преподнесенном маститому драматургу в день 30-летия со дня первой постановки «Пепло», в 1901 г. (издан нами).

В приложении к настоящей статье приводятся, в интересах армянского читателя, «письма в редакцию» Г. Сундукянца, появлявшиеся по разному случаю на страницах грузинской периодической печати, как-то: «Дрозба» 1883 г. № 219, «Ивериа» 1886 г. № 49 и 1901 г. № 99 (все три—в нашем переводе на армянский язык).